

Այնքան փառաբանումներէն ու ներբողներէն յետոյ, ուղղուած ուսակական յեղափոխութեան ու ուսւ բանուոր դասակարգին, ի՞նչ արժէք ունի հեղինակի այս մանուածապատ դարձուածքն ու խորհրդաւոր ակնարկը, որով կ'ուզէ ցուցնել, թէ ինքը հակառակ է բօլշեւիկեան ուժի մինչ, հակառակ է «մեր օրերի դայթակղութեան» եւ կը սպասէ նոր օրերու...

«Կարող է պատահել՝ որ ոմանք (եւ այստեղ առաջին հերթին հայ բանուորները) կամենան հրաժարուիլ յեղափոխութեան շնորհից, չգիտակցելով թէ Հայաստանի ազատութեան աղբիւրն իրանք են եւ ոչ բուրժուազիան կամ օտար մի ոյժ: Սա կը լինի սխալ միտում եւ անզամ անիրագործելի ձեռնարկ: Հայկական ինքնուրուցման դէմ պիտի ծառանայ բանուորական Ռուսաստանը, քանի նա ընթանում է սօցիալիզմի դրօշակի տակ եւ կամենում է ազատագրել իրան թէ՛ բռնատար շրջանի ժառանգութիւնից եւ թէ՛ մեր օրերի դայթակղութիւնից»\*):

«Բանուորական Ռուսաստանը» ըստ երկույթին այժմեան բօլշեւիկեան Ռուսաստանը չէ, այլ դալոց սօցիալիստականը:

Բայց հայ ժողովուրդը այլեւս պէտք չունի բանուորական Ռուսաստանի նոր «ծառացումներուն», ոչ իսկ սեփական նոր «ձեռնարկներուն», քանի որ հայկական խնդիրը, ըստ Անանունի, արդէն իսկ լուծուած է բօլշեւիկեան ուժի մինչ տակ: Լսեցէ՛ք նորէն այս հանդիսաւոր աւետիսը, որ կը հնչէ տխուր զաւեշտի մը պէս.

«Հայ բանուորը, եթէ նա գիտակ է հայրենիքի պատմութեան անցեալին ու խորհրդին, պիտի տողորուի բարձր հրճուանքով ու հպարտութեամբ՝ որ իր դասակարգի շարժումն ու դաւանանքը լուծեց հայկական կրնճիւր: Նրանից առաջ մեծատուններն ու արտօնեալները սեղան նստեցին... եւ ոչինչ չափեցին իրենց յոգնութիւնից... որովհետեւ խարդախութեան ու շահագործման շաւղով ընթացան»...

Տղք ցնծազին աւետիսը, նոյնքան բարձրագոյ, որքան անամէջ, զետեղուած է գրքի վերջին էջի վրայ:

\*) էջ 693

Եւ դո՛ւ է մարքսիստ պատմագիրը իր այդ չընաղ վերջաբանով: Խորհեցէ՛ք, որ մարդը երեք անազին հատորներ գրեր է «Ռուսահայրի Հասարակական Զարգացումը» խորագրով\*) եւ երկար յոգնութիւնէ յետոյ իր հրատարակուած աշխատութեան վերջաբանը կը գրէ:

Հող «հայութեան հաւաքական դէմքը» փնտոողը, «հայոց պատմութեան իմաստն» ընդգրկողը պէտք է որ ըսէ իր խորախորհուրդ եզրակացութիւնները, իր դադափարները հայկական դատի եւ հայ ճակատագրի յեղեղումներու մասին: Եւ անա նա կ'արձանագրէ «դարերի խորհուրդը», «հին պատգամը և 1918 թրուականը», երբ անոնք իրականացան: Կ'արձանագրէ — հող արդէն ճշմարտօրէն — որ այդ բախտորոշ օրերուն, Հայաստանի անկախութեան օրերուն, «հայ ժողովրդի ոգին աճեց ու ամրացաւ»... «Մաքրուեց մահմետական տիրապետութեան յոռի ժառանգութիւնից», խաբստուեց հայ երկրում եւայլն:

Եւ վայրկեան մը կը զգայ, որ այդ յետագարձ խոհերը կարծես թէ Դաշնակցութեան դորձը ջատագովելու հանդամանք ունին, մէկէն ի մէկ volte-face կ'ընէ — տրամաբանական դահալէժ թռիչք մը — կը յիշէ ուժգնօրէն, որ ինքը հայրենասէր լինելէ առաջ մարքսիստ մըն է եւ որ հարկ է վերջացնել դիրքը սանկ շունդալի մարքսիստական յայտարարութեամբ մը, հարկ է շեշտել, որ բուրժուազիան դաւաճան մըն է եւ պրոլետարիատը՝ միակ ազատարար, հարկ է շեշտել, որ բոլոր ոչ-մարքսիստ հոսանքները — Դաշնակցականներ, Ռամկավարներ եւայլն — իբրեւ բուրժուա, խոշոր բուրժուա, մանր բուրժուա եւ կղեկան, իբրեւ «մեծատունք», «շահագործողներ» ու «խարդախողներ», Սատանայի ու Սանդարամետի ծնունդներ, չէին կրնար այլ կերպ

\*) Առաջին երկու հատորները, տարաբախտարար, չեմ տեսած, չկան անոնք եւ Ս. Ղազարի գրադարանում: Բայց կ'երեւակայեմ, թէ մօտաւորապէս ինչ կը ներկայացնեն այդ առաջին հատորները, գրուած նախկին տարիներում, երբ հեղինակը շատ աւելի անդադրաստ եղած է թէ պատմափիլիսոփայական իր պաշարով եւ թէ շիտակութեան աստիճանով: